



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
ազգային պլատֆորմի համակարգող պարոն Ս. Մաղաքյանին
Armenian Disability Platform <armdisabilityplatform@gmail.com>

Ձեր 20.02.2019թ. թիվ P192007 գրությանը.

Հարգելի պարոն Մաղաքյան

ՀՀ Լոռու մարզպետարանի բյուջեից 2018 թվականին կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրվել է 30.000.000 դրամ ֆինանսական աջակցություն /կազմակերպություններին կամ զին. ընտանիքներին՝ 1.954.000 դրամ, քաղաքացիներին՝ 28.046.000 դրամ/: Այդ թվում՝

- Բանակի օրվա կապակցությամբ վիրավոր և զոհված զինծառայողների ընտանիքներին հատկացվել է 200.000 դրամ ֆինանսական աջակցություն /2 վիրավոր զին. ծառայողների ընտանիքներին 60.000-ական դրամ և 2 զոհված զին.ծառայողների ընտանիքներին՝ 40.000-ական դրամ/:

- 2016թ. ապրիլյան պատերազմում զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին հատկացվել է 630.000 դրամ ֆինանսական աջակցություն /6 զոհված զին.ծառայողների ընտանիքներին հատկացվել է 50.000-ական դրամ և 11 վիրավոր զին.ծառայողների ընտանիքներին՝ 30.000-ական/

- Զոհված ազատամարտիկների ընտանիքների դեկտեմբերին հատկացվել է 300.000 դրամ ֆինանսական աջակցություն/ 6 ընտանիքների՝ 50.000-ական/

- «Հավասար իրավունքներ հավասար հնարավորություններ» ՀԿ-ին երկու անգամ հատկացվել է 40.000-ական դրամ /տարածքի վարձակալման համար/

- «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ին հատկացվել է 50.000 դրամ՝ միջոցառման կազմակերպման համար

- «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին հատկացվել է 150.000 դրամ՝ տարեցների օրվա կապակցությամբ

- «ԷԴԱՍ» ՀԿ-ին հատկացվել է՝ 40.000 դրամ

- «Օրրան» ԲՀԿ-ին հատկացվել է՝ 144.000 դրամ՝ միջոցառման համար

- Թվով 3 բազմազավակ ընտանիքների դեկտեմբերին հատկացվել է 150.000 դրամ /50.000-ական/ ֆինանսական աջակցություն

- Վետերանների խորհրդին հատկացվել է՝ 210.000 դրամ ֆինանսական աջակցություն

• ՀՀ Լոռու մարզպետին գրավոր դիմած 1351 քաղաքացիներին հատկացվել է 28.046.000 դրամ ֆինանսական աջակցություն:

Ինչ վերաբերում է քաղաքացիներին տրամադրված ֆինանսական միջոցների ըստ տեսակների դասակարգմանը, ապա այն հնարավոր չէ տարանջատել, քանի որ քաղաքացին իր դիմումի մեջ միաժամանակ նշում է և առողջական /բուժման, հետազոտության, դեղորայքի ձեռքբերման, տրանսպորտային ծախսի փոխհատուցման և այլն/, և սոցիալական /ցածր կենցաղավարության, սոցիալական անապահովության, ընտանիքի ֆինանսական դժվարությունների, ունեցած պարտքերի և այլն/, և կոմունալ-կենցաղային ծախսերի, և բնակարանային /վարձակալության, տնակի կամ կացարանի վերանորոգման ծախսերի փոխհատուցման և այլն/ հարցերը:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ